



«Արմավիթի մարզի մարզպետ  
Համբարձում Մաթևոսյանին»

«Քաղաքացի՝ Մանե Աբրահամյանից  
(Էլ-փոստ maneabrahamyan89@gmail.com  
Հեռ. 094 52 34 69)


## Հ Ա Ր Ց Ո Ւ Մ

Հարգելի պարոն Մաթևոսյան

համաձայն 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

1. 2021թ.-ին ինչ որոշումներ է տրամադրել Ձեզ Եղեգնուտ համայնքի ավագանին:
2. Ավագանու առկա որոշումների պատճենները խնդրում եմ տրամադրել ինձ:
3. 2021թ.-ին ինչ որոշումներ է տրամադրել Ձեզ Եղեգնուտ համայնքի համայնքապետը:
4. Համայնքապետի առկա որոշումների պատճենները խնդրում եմ տրամադրել ինձ:
5. Խնդրում եմ պատասխանել՝ արդյո՞ք ավագանու 25.12.2020թ-ի որոշումը գործում է, և ավագանու 3 անդամների՝ Մարգար Մարգարյանի, Հովհաննես Մարգարյանի, Գրիշա Ռաշոյանի լիազորությունները դադարեցվա՞ծ են:
6. Խնդրում եմ պատասխանել, թե ինչ հիմքով էր Ազատ Գրիգորյանը նշանակվել Եղեգնուտ համայնքի համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար:
7. Խնդրում եմ պատասխանել՝ ո՞ր օրվանից է Ազատ Գրիգորյանի լիազորությունները որպես ժամանակավոր պաշտոնակատար դադարեցվել:
8. Խնդրում եմ պատասխանել՝ այս պահի դրությամբ ում է պատկանում Եղեգնուտ համայնքի համայնքապետի լիազորությունները:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային տարբերակով: (Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):

Հարգանքով՝ Մանե Աբրահամյան 

25 հուլիս 2021թ.

**Հանրային լրագրության ակումբի մասին**

Հանրային լրագրության ակումբը Հայաստանում գրանցված հասարակական կազմակերպություն է: Մեր առաքելությունն է՝ խթանել խոսքի ազատությունը, բազմազանությունը եւ բազմակարծությունը Հայաստանում՝ զարգացնելով մասնակցային եւ հանրային թղթակցությունը, քաղաքացիական թղթակիցներին եւ պրոֆեսիոնալ լրագրողներին, լրատվամիջոցներին ու սոցիալական մեդիայի մասնագետներին, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ հասարակական այլ ոլորտների մասնագետներին կապող համագործակցության գրասիջ, աշխատանքային կամուրջներ ստեղծելով: